
**ԿԱՍԿԱԾԱՆՔԻ ԵՎ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ
ՏԵՂԵԿԱՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

ԱՎԱԳՅԱՆ Վ. Վ.

Կասկածյալն իրավունք ունի իմանալու, թե ինչու է կասկածվում, տեղեկացվելու կասկածանքի բովանդակությանը, նրան վերագրվող արարքի փաստական կողմին և իրավաբանական որակմանը, ձեռքարկվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալու ձեռքարկվելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը, իսկ ձեռքարկվման արձանագրություն կազմելուց հետո՝ դրա պատճենը: Իր հերթին մեղադրյալն իրավունք ունի իմանալու, թե ինչու է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրվելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալու որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը (Քրեական դատավարության օրենսգիրք^{*}, հոդվ. 63, մաս 2, կետ 1 և կետ 3, հոդվ. 65, մաս 2, կետ 1):

Կարծում ենք, որ ՔԴՕ-ի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը կազմում են օրգանական ամբողջություն: Բանն այն է, որ եթե մեղադրանքը ձևակերպվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ, ապա կասկածանքը՝ որպես այդպիսին, չի շարադրվում դրա համար հատուկ նախատեսված դատավարական փաստաթղթում: Կասկածանքը փաստորեն արտացոլվում է ձեռքարկվելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման կամ ձեռքարկվման արձանագրության մեջ: Ուստի քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կասկածյալին հանձնել նշված որոշման կամ արձանագրության պատճենը, հայտնել, թե տվյալ անձն ինչու է կասկածվում, պարզաբանել կասկածանքի բովանդակությունը, այսինքն՝ նրան վերագրվող արարքի փաստական կողմը և իրավաբանական որակումը:

Կասկածանքի էությանը կասկածյալի իրազեկվածությունը երաշխավորվում է քրեական հետապնդման մարմնի հետևյալ պարտականություններով. ժամանակին հարցաքննել կասկածյալին, հարցաքննությունը սկսելուց առաջ կասկածյալին բացատրել կասկածանքի էությունը (ՔԴՕ, հոդվ. 211, մաս 1, մաս 3): Ինչ վերաբերում է մեղադրանքի էությանը մեղադրյալի իրազեկվածությանը, ապա դա ևս երաշխավորվում է քրեական հետապնդման մարմնի մի շարք գործողություններով՝ 1) ժամանակին մեղադրանք առաջադրել և հարցաքննել անձին որպես մեղադրյալ (ՔԴՕ, հոդվ. 203, մաս 1, հոդվ. 212, մաս 1), 2) մեղադրյալին հնարավորություն ընձեռել մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ

^{*} Այսուհետև՝ ՔԴՕ:

ծանոթանալու գործի բոլոր նյութերին, պատճենահանել դրանք և անել դուրսգրումներ (տե՛ս հոդվ. 265, 266), 3) մեղադրյալին հանձնել մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները (հոդվ. 277, մաս 3)¹, 4) պատճառաբանել որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը (հոդվ. 202, մաս 2), 5) բացատրել առաջադրված մեղադրանքի էությունը, այսինքն՝ պարզաբանել մեղսագրվող արարքի փաստական կողմը և իրավաբանական որակումը (հոդվ. 203, մաս 2):

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է (ՔԴՕ, հոդվ. 202, մաս 1): Անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցություն ասելով, մեր կարծիքով, հասկացվում է հավաքված ապացույցների ամբողջությունը, որը հաստատում է հանցագործության դեպքը և հանգամանքները (հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և այլն), որքանով դրանք պարզված են գործի նյութերով, անձի առնչությունը դեպքին, հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները (արարքի որակումը), անձի մեղավորությունը քրեական օրենքով արգելված արարքը կատարելու մեջ, ինչպես նաև քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների բացակայությունը²: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը պատճառաբանված է, եթե պատշաճ փաստարկված է³, այսինքն՝ հիմնված է տվյալ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցության վրա: Դրանք պետք է լինեն ծանրակշիռ և ստուգված ապացույցներ: Ընդամենը, քննիչը նշված որոշման մեջ պետք է մատնանշի այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել իր հետևությունների համար: Որոշման պատճառաբանված չլինելը խախտում (սահմանափակում) է մեղադրյալի պաշտպանության իրավունքը (օրինակ՝ մեղադրյալը գրկվում է արարքի որակմանը և դրան վերաբերող հանգամանքների ճշտությունը վիճարկելու հնարավորությունից): Անձին որպես մեղադրյալ ներգրավելը դեռևս տրվյալ անձի մեղավորության մասին քննիչի վերջնական հետևությունը չէ, քանի որ նախաքննության ընթացքում կարող է ծագել առաջադրված մեղադրանքը փոփոխելու անհրաժեշտություն, կամ մեղադրանքն ամբողջությամբ կամ դրա որևէ մասը կարող է չհաստատվել:

Պրակտիկայում դեռևս հաղթահարված չեն այն դեպքերը, երբ անձին որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելն արհեստա-

¹ Մեղադրական եզրակացության պատճենը ժամանակին մեղադրյալին հանձնելը մեղադրանքից պաշտպանվելու միջոց է, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման երաշխիք: Դրա նպատակն է՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռել հանգամանորեն պարզելու մեղադրանքի էությունը, նախապատրաստելու իր պաշտպանությունը, խորհրդակցելու պաշտպանի հետ: Ուստի մեղադրական եզրակացության պատճենը մեղադրյալին չհանձնելը ոչ միայն ՔԴՕ-ի, այլև Եվրոպական կոնվենցիայի պահանջների (հոդվ. 6, մաս 3, կետ «ա», «բ», «գ») խախտում է:

² Տե՛ս նաև *Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РСФСР*, с. 213.

³ Նկատենք, որ «մեղադրանքի գործառույթը պետք է իրականացվի գոյություն ունեցող փաստերին համապատասխան» (*Курс советского уголовного процесса. Общая часть*, с. 426):

կանոթեն ուշացվում են՝ հասցվելով նախաքննության ավարտ: Այդպիսի հապաղման հետևանքով անձը փաստորեն զրկվում է այն իրավունքներից, որոնք օրենքը տրամադրում է մեղադրյալին, այսինքն՝ խախտվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Այսպես, օրինակ, Ղ.-ի՝ դիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենների ուսումնասիրությամբ պարզվեց հետևյալը: N 13160404 քրեական գործը հարուցվել է 12.05.2004 թ.: Ղ.-ին մեղադրանք է առաջադրվել 28.05.2004 թ.: Մեղադրյալ Ղ.-ին ծանոթացման նպատակով քրեական գործի նյութերը ներկայացվել են 28.05.2004 թ., սակայն նա հրաժարվել է ծանոթանալ դրանց: Մեղադրական եզրակացությունը կազմվել է 31.05.2004 թ.⁴: Մեղադրանքից պաշտպանվելու, պաշտպանական մարտավարությունը կառուցելու համար անհրաժեշտ է բավարար ժամանակ, ինչը նշված դեպքում, ըստ էության, բացակայում է: Անձը պետք է ժամանակին իմանա՝ ինչում է մեղադրվում, որ կարողանա մեղադրանքից պաշտպանվել, իր իրավունքներից օգտվել: «Որպես մեղադրյալ ներգրավելը պետք է կատարվի դրա համար բավարար ապացույցներ հավաքվելուց անմիջապես հետո: Որպես մեղադրյալ ներգրավելը նախաքննության ավարտից անմիջապես առաջ հնարավորություն չի տալիս բազմակողմանիորեն ստուգել մեղադրյալի բացատրությունները: Այդ դեպքում նա զրկվում է նաև իր դատավարական իրավունքներից ժամանակին և ամբողջությամբ օգտվելու հնարավորությունից»⁵: Դեռևս Ա. Կոնին նշում էր, որ անձին որպես մեղադրյալ «ներգրավելու հարցում զգուշությունն անհրաժեշտ է: Դա ոչ միայն իրավաբանական, այլև բարոյական պահանջ է: Սակայն զգուշությունը չպետք է շփոթվի դիտավորյալ դանդաղկոտության հետ, որն ի չիք է դարձնում մեղադրյալի իրավունքները»⁶: Ա. Կոնին իրավամբ քննադատում էր «միակողմանի մեղադրական գործունեությունը», երբ քննիչն անձին որպես մեղադրյալ ներգրավում է նախաքննության վերջում, համարյա գործը դատախազին ուղարկելու նախօրյակին, ինչը մեղադրյալին փաստորեն զրկում է ժամանակին և իրապես պաշտպանվելու հնարավորությունից⁷: Ուստի առաջարկում ենք՝ ՔԴՕ-ի 202-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերի առկայության դեպքում քննիչը կամ դատախազն *անհապաղ* պատճառաբանված որոշում է կայացնում տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին»: Այս կարգն ավելի կեղծիսավորեր մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը:

Հարկ է նշել, որ պրակտիկայում դեռևս առկա են այն դեպքերը, երբ ապագա կասկածյալին կամ մեղադրյալին քննիչը հարցաքննում է որպես վկա: Այսպես, օրինակ՝ Շ.-ի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2001 թ. հուլիսի 13-ի որոշման մեջ մասնավորապես նշված է. «Անտեսելով այն հանգամանքը, որ նյու-

⁴ Բնագրում նշված ազգանուններն այստեղ հիշվում են սկզբնատառերով:

⁵ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության արխիվ, վարույթ N 03-348-2004:

⁶ *Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РСФСР, с. 213.*

⁷ *Кони А. В., Собр. соч. в 8-ми т., т. 4. М., 1967, с. 186.*

⁸ Նույն տեղում, *т. 1, М., 1966, с. 136.*

թերում կան հայտարարություններ և բացատրություններ Շ.-ի կողմից Ս.-ից 10.000 ԱՄՆ դոլար կաշառք ստանալու մասին՝ նախաքննության մարմինը նրան հարցաքննել է որպես վկա, նախագոյնացրել ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու և ցուցմունքներ տալուց խուսափելու կամ հրաժարվելու համար... նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Շ.-ին մերկացնող հարցեր»⁸։ Կամ Ռ.-ն իրեն հետագայում մեղսագրված գործողությունների վերաբերյալ բազմիցս «հարցաքննվել է որպես վկա՝ նախագոյնացվելով սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին... Դրանով իսկ... նա զրկված է եղել նախնական քննության ընթացքում այն իրավունքներից օգտվելու հնարավորությունից, որոնցով քրեական դատավարությունում օժտված են կասկածյալը և մեղադրյալը»⁹։

Անձին *դե յուրե* (իրավաբանորեն) որպես վկա, իսկ *դե ֆակտո* (փաստացի) որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննելը պաշտպանության իրավունքի (քրեադատավարական օրենքի) կոպիտ խախտում է, ուստիև անթույլատրելի է։ Կարծում ենք, որ նման ցուցմունքները չեն կարող համարվել կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության ապացույցներ (տե՛ս ՔԴՕ, հոդվ. 105)¹⁰։ «Անձին կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության առարկայով վկա հարցաքննելն օրինականության կոպիտ խախտում է։ Նման դեպքերում քրեական պատասխանատվության սպառնալիքի տակ նրանից ցուցմունք է կորզվում... Նման դեպքերում անձին պետք է հարցաքննել կամ կասկածյալ, կամ էլ մեղադրյալ»¹¹։

Քննության առնելով անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու պահի, անձի՝ որևէ կարգավիճակով ինքն իր դեմ չվկայելու հարցերը՝ հարկ է հաշվի առնել նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի ու Եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթները (հոդվ. 14, մաս 3 և հոդվ. 6, մաս 3)։

Կարևոր է ոչ միայն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելու ժամանակը, այլև այդ որոշման բովանդակությունը։ Չէ՞ որ իմանալ՝ ինչու են մեղադրում՝ նշանակում է գիտենալ մեղադրանքի էությունը, ապա և պաշտպանվել դրանից։ Քննիչը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ նշում է մեղադրանքի ձևակերպումը՝ հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները՝ որքանով դրանք պարզված են գործի նյութերով, ինչպես նաև Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատաս-

⁸ Հայաստանի Հանրապետության վճարել դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի որոշումների ժողովածու (2001 թ.), հ. 3, Ե. 2002, էջ 293։

⁹ *Бюллетень Верховного суда СССР, 1974, N 4, с. 25.*

¹⁰ Տե՛ս նաև *Вопросы расследования преступлений. Под ред. И. Н. Кожевникова, М., 2000, с. 499.*

¹¹ **Խաչատրյան Մ.**, Քրեական դատավարության տեսության և պրակտիկայի հարցեր, Ե., 1996, էջ 60։

խանատվությունը¹²: Ընդ որում, որոշման նկարագրական-պատճառաբանական մասում պետք է նշվեն, թե կոնկրետ ինչ գործողություններ են մեղսագրվում մեղադրյալին, տարանջատվեն հանցակիցների (մեղադրյալների) գործողությունները¹³: Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը քննիչը ներկայացնում է մեղադրյալին, այսինքն՝ նրան մեղադրանք է առաջադրում, բացատրում մեղադրանքի էությունը, որից հետո այդ որոշման պատճենն անմիջապես անվճար հանձնում է մեղադրյալին:

Այս ամենի շնորհիվ կապահովվի մեղադրյալի իրավունքը՝ իմանալ, թե ինչում է մեղադրվում: Վերոնշյալ պահանջների չկատարումը քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում է, որն ազդում է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, քանզի այդ դեպքում խախտվում (սահմանափակվում) է մեղադրյալի պաշտպանության իրավունքը¹⁴: Պատահական չէ, որ Ղ.-ի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանը որպես մեղադրյալ ներգրավելու կարգի խախտումը համարել է քրեադատավարական օրենքի էական խախտում¹⁵:

Որպեսզի մեղադրյալը ստույգ իմանա, թե ինչում է մեղադրվում, անհրաժեշտ է նաև, որ քննիչը նշված որոշման մեջ մեղադրյալին մեղսագրվող արարքը նկարագրի լրիվ և կոնկրետ¹⁶: Քրեական դատավարության ընթացքում ընդունված ցանկացած որոշում պետք է լինի հիմնավորված: Դա վերաբերում է նաև որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմանը, որը, մեր կարծիքով, պետք է բովանդակի հղումներ այն փաստական տվյալներին՝ ապացույցներին, որոնք հիմք են ծառայել նշված որոշման կայացման (այսինքն՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու) համար: Ուստի որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումն անհիմն է, իսկ մեղադրյալի պաշտպանության իրավունքը՝ խախտված, եթե մինչև նախաքննության ավարտը մեղադրյալին չեն հայտնում որպես մեղադրյալ ներգրավման համար հիմք ծառայած ապացույցները (այսինքն՝ ներգրավման հիմքերը): Այդ դեպքում մեղադրյալի համար դժվար է մատնացույց անել մեղադրանքի անհիմն լինելը, ցուցմունքներ տալ իրեն առաջադրված մեղադրանքի առիթով, գործում առկա ապացույցների մասին, հարուցել միջնորդություններ կամ իր պաշտպանության օգտին կատարել օրենքով չարգելված որևէ այլ

¹² Նկատենք, որ դատական պրակտիկան քրեական դատավարության օրենքի էական խախտում է համարում որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ այն քրեական օրենքը չնշելը, որով անձը պատասխանատվության է ենթարկվում (տե՛ս *Бюллетень Верховного суда РСФСР*, 1980, N 6, с. 42):

¹³ Նկատենք նաև, որ դատական պրակտիկան քրեական դատավարության օրենքի էական խախտում է համարում որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ մեղադրյալների գործողությունները չտարանջատելը (տե՛ս *Бюллетень Верховного суда РСФСР*, 1987, N 7, с. 7):

¹⁴ Տե՛ս նաև *Вопросы расследования преступлений. Под ред. И. Н. Кожевникова*, с. 750, 751.

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերի պալատի որոշումների ժողովածու (2000–2001 թթ.), հ. 2, Ե., 2002, էջ 138–139:

¹⁶ Մեղադրանքի կոնկրետ լինելու մասին տե՛ս *Ларин А. М., Расследование по уголовному делу: процессуальные функции*, М., 1986, с. 70–71.

գործողություն: Քննիչը «յուրաքանչյուր գործով պետք է հիմնավորի առաջադրվող մեղադրանքը՝ նշելով դրա հիմքում դրված փաստական տվյալները և փաստարկները... Դա նախնական քննության մարմինների ոչ միայն իրավունքն է, այլև պարտականությունը և ունի սկզբունքորեն կարևոր նշանակություն»¹⁷: Որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ ներգրավման հիմքերի (ապացույցների) մեջբերման (դրանք նշելու, վկայակոչելու) անհրաժեշտության մասին տեսակետը հավանության է արժանացել մի շարք դատավարագետների կողմից¹⁸: ՀՀ ՔԴՕ-ում այդ մասին ուղղակիորեն նշելը կհամապատասխաներ ոչ միայն մեր քրեական դատավարության սկզբունքներին, այլև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի ու Եվրոպական կոնվենցիայի դրույթներին (հոդվ. 14, մաս 3, կետ «ա» և հոդվ. 6, մաս 3, կետ «ա»):

Կան կասկածներ, որ եթե որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը բովանդակի հղումներ ապացույցներին, ապա դա չի բացառի մեղադրյալի փորձերը «խոչընդոտելու ճշմարտության բացահայտմանը»¹⁹, որ այդ դեպքում հարցաքննությունը «կկորցնեի իր նշանակությունը՝ որպես հանցավորին մերկացնելու միջոց, և կհանգեր համարյա բացառապես այն բանի դատավարական ձևակերպմանը, ինչը մեղադրյալը հարկ կհամարեր հայտնել քննիչին»²⁰:

Այս տեսակետներին համաձայնել հնարավոր չէ, քանզի քննիչն ունի բավարար միջոցներ՝ կանխելու, խափանելու համար մեղադրյալի փորձերը խոչընդոտելու ճշմարտության բացահայտմանը: Բացի այդ, մեղադրյալը բնավ պարտավոր չէ նախաքննության մարմնին որևէ աջակցություն ցույց տալ և իրավունք ունի քննիչին հայտնելու այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, կարող են նշանակություն ունենալ գործի համար, այսինքն՝ որոնք, ըստ նրա, անհրաժեշտ է հայտնել: Ընդս-

¹⁷ Жогин Н. В., Фаткуллин Ф. Н., *Предварительное следствие в советском уголовном процессе*, М., 1965, с. 210.

¹⁸ См. Полянский Н. Н., *Вопросы теории советского уголовного процесса*, М., 1956, с. 196; Савицкий В. М., *Прокурорский надзор за соблюдением законности в деятельности органов дознания и предварительного следствия*, М., 1959, с. 188–190; Стремовский В. А., *Участники предварительного следствия в советском уголовном процессе*, Ростов, 1966, с. 132–134; Фаткуллин Ф. Н., Зинатуллин З. З., Аврах Я. С., *Обвинение и защита по уголовным делам*, Казань, 1976, с. 49; *Право обвиняемого на защиту в социалистическом уголовном процессе. Под ред. В. М. Савицкого*, М., 1983, с. 196–197; Абдумаджидов Г. А., *Расследование преступлений*, Ташкент, 1986, с. 81–82 և այլք: Ավելին, Վ. Լուկաշնիչն անհրաժեշտ է համարում որպես մեղադրյալ ներգրավման որոշման մեջ ոչ միայն հղում անել ապացույցներին, այլև դրանք մեղադրյալին ներկայացնել (առաջադրել) առաջին հարցաքննության ժամանակ (տե՛ս Лукашевич В. З., *Установление уголовной ответственности в советском уголовном процессе*, Л., 1985, с. 138–139):

¹⁹ Куцова Э. Ф., *Гарантии прав личности в советском уголовном процессе (Предмет, цель, содержание)*, М., 1973, с. 109–110.

²⁰ Каминская В. И., *Показания обвиняемого в советском уголовном процессе*, М., 1960, с. 110.

մին, նկատենք, որ մեղադրյալի կողմից պաշտպանության իր իրավունքի իրականացումը չի կարող խոչընդոտել (դիտարկվել որպես խոչընդոտ) դատավարության շարունակմանը:

Եթե նախաքննություն կատարելիս ծագում է առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտություն, ապա քննիչը պարտավոր է կրկին մեղադրանք առաջադրել՝ պահպանելով որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու կարգի պահանջները:

Կասկածանքի և մեղադրանքի բովանդակությանը տեղեկացվելու իրավունքի ապահովմամբ լուծվում են նաև քրեական դատավարության խնդիրները:

Այսպիսով, քրեական վարույթն իրականացնող մարմինները դատավարական գործողություններ կատարելիս և որոշումներ կայացնելիս (փաստաթղթեր կազմելիս) պետք է առավելագույնս հաշվի առնեն դրանց ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, ապահովեն կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

ПРАВО НА ИЗВЕЩЕНИЕ О ПОДОЗРЕНИИ И ОБВИНЕНИИ И ЕГО ОБЕСПЕЧЕНИЕ

АВАГЯН В. В.

Резюме

Основание для привлечения лица в качестве обвиняемого – это совокупность доказательств, свидетельствующих о совершении им преступления. На практике, однако, бывают случаи, когда привлечение лица в качестве обвиняемого и предъявление ему обвинения искусственно затягиваются вплоть до окончания предварительного следствия. Бывают также случаи, когда будущего подозреваемого или обвиняемого следователь допрашивает в качестве свидетеля, в результате лицо фактически лишается тех прав, которые закон предоставляет подозреваемому или обвиняемому, т. е. нарушается право подозреваемого и обвиняемого на защиту. В решении о привлечении лица в качестве обвиняемого указание оснований (т.е. доказательств) привлечения будет соответствовать не только принципам уголовного судопроизводства РА, но и международным соглашениям РА. Следовательно, органы, осуществляющие судопроизводство по уголовному делу, при проведении процессуальных действий и принятии решений должны максимально учитывать требования, предъявляемые к их форме и содержанию, обеспечивать право подозреваемого и обвиняемого на защиту, включая право на извещение о подозрении и обвинении.